

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< ----- >> -----2015թ.

N -----

**<<Չորրորդ իշխանություն>> թերթի լրագրող  
Մելանյա Ծառուկյանին**

### **Հարգելի տիկին Ծառուկյան**

Ի պատասխան Ձեր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում սույն թվականի մարտի 4-ին հաշվառված N2556-15 հարցման՝ տեղեկացվում է.

1. ՀՀ Արմավիրի մարզային կառույցը չսատարեց կուսակցության կողմից ինքնաառաջադրված չորս թեկնածուներին ոչ թե նրա համար, որ նրանց մեջ չկային արժանավորներ, այլ այն պատճառով, որ չորսն էլ ներկայացնում էին ՀՀ-ն և նրանցից յուրաքանչյուրն ուներ իր արժանիքները:
2. Վերը նշված պատասխանն արդեն ենթադրում է, որ մենք որևէ թեկնածուից, այդ թվում՝ Ռուբեն Խլիլայանից ազատվելու ցանկություն չենք ունեցել: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Ձեր տեղեկությունը գործող քաղաքապետի հետ ունեցած հարաբերությունների մասին, մեղմ ասած, ճիշտ չէ: Ռուբեն Խլիլայանը ՀՀ Արմավիրի մարզի 97 համայնքների ղեկավարներից մեկն է, և նրա հետ ՀՀ Արմավիրի մարզպետի, ինչպես նաև մարզպետարանի հարաբերությունները նույնն են, ինչպես մյուս բոլոր համայնքների ղեկավարների հետ:
3. Ինչպես մյուս թեկնածուներին, այնպես էլ իմ օգնականին ես չեմ արգելել իրականացնելու իր քաղաքացիական իրավունքը, այն է՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը:

Ձեր հարցում ճիշտ է նշվում, որ ես, որպես մարզպետ, ի պաշտոնե իրավունք չունեմ խառնվելու ընտրությունների ընթացքին: Սակայն ես լիազորված եմ իրականացնելու օրենսդրությամբ սահմանված այն գործառույթները, որոնք վերապահված են մարզպետին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և իրականացման գործում:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ԴԱԿՐԱՄԱՆՅԱՆ